ԴԻՏԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ARMANI, ARME ԵՎ URME ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հնագույն ցեղային միություններ Հայկական լեռնաշխարհում, մեզ հասած գրավոր աղբյուրների վկայությամբ, կազմավորվել է Ուլլիվի երկրում (տեղադրվում է Դիարբեքիրի շրջանում)[1]։ Ուլլիվի երկիրը հիշատակվում է հին արևելյան վիմագրության մեջ հայտնի «Նարամսինը և նրա թշնամիները» անունով արձանագրությունում, որը գրվել է մոտավորապես II հազարամյակի սկզբներին (մ. թ. ա.), հին խեթերենով։ Ինչպես երևում է այդ արձանագրությունից, XXIII դ. (մ. թ. ա.) Ակկագի թագավոր Նարամսինի ժամանակ (2290—2254 թթ. մ. թ. ա.) Ակկադից հյուսիս և արևմուտք բնակած շուրջ 17 երկրների թագավորներ միացյալ ուժերով հարձակվում են նրա վրա[2]։ Այս արձանագրության մեջ Ուլլիվիի և մյուս 16 երկրների թվում հիշատակվում է նաև „....Ma-da-ki-na LUGAL KUR URUAr-ma-ni...." (Մադակինան՝ Արմանի քաղաքի երկրի թագավորը)։

Դեռևս մ. թ. ա. XXIII դարում հիշատակվող Արմանի երկրի գոյությունը, ապա նրա ու արմենների ցեղանվան համանմանությունը կարծես պահանջում է հենց պատմական այս ժամանակաշրջանից էլ սկսել Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի պատմությունը։ Արմանի երկրի տեղադրությունը մինչև այժմ ճշտված չէ, չնայած որ արևելագիտության մեջ ոչ քիչ կարծիքներ ու դիտողություններ կան նրա մասին։

Բ. Հրոզնին Արմանին տեղադրում է լուլլուբիների երկրի և Ակկադի միջև, Բաբելոնից հյուսիս-արևելք, ելնելով Նարամսինի մեկ այլ բնագրից, որտեղ պատմվում է Սարգոն Ակկադացու (Նարամսինի պապի, XXIV դ.) արշավանքների մասին Արմանի երկրի վրա։ Նա Արմանին նույնացնում է ասորեստանյան թագավորներ Թիգլաթ-Պալասար I-ի և Սալմանասար III-ի արձանագրություններում հիշատակվող Արման քաղաքի հետ, որը տեղադրվում է Զագրոսում, Ջերել-Համրինից արևելք։ Բ. Հրոզնին միաժամանակ գտնում է, որ Արմանին ոչ մի ընդհանուր բան չունի Արմենիա անվան հետ[3]։ Հետագայում Բ. Հրոզնին Արմանին տեղադրում է Հալեպի տեղում[4]։

Ի. Մ. Դյակոնովը կասկածում է խեթական այդ բնագրում հիշատակվող անունների իսկության վրա և որպես օրինակ մատնացույց անում Արմանի երկիրը, որի թագավորը Նարամսինի բուն արձանագրության մեջ[5] հանդես է գալիս ոչ թե Մադակինա անունով, այլ Ռեդ-Ադադ ձևով[6]։ Ի. Մ. Դյակոնովը այսպիսի կասկածները չի կարող արդարացվել, որովհետև հնարավոր է, որ խեթական արձանագրության մեջ հիշատակվող անձնանունը մեկ այլ լեզվով գրված բնագրում հանդես գա, ասենք, թարգմանված ձևով։

Ուսումնասիրողներից Հ. Գյուտերբոկը[7], Ֆ. Դելիչը, Ի. Դյակոնովը[8], Պ. Ունգնադը[9], Ջ. Գելբը[10] Արմանին տեղադրում են Խալման-Խալվանի կամ Հալեպի տեղում։ Ասորեստանյան թագավորների արձանագրություններում հիշատակվող Արման, Արմունա, Արմանի երկրները

---

[1] Լ. Բարսեղյան, Հնագույն ցեղային միություններ Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 1, էջ 87—90։

[2] E. Forrer, Die Boghazköi-texte in Umschrift, Leipzig, 1926, II, № 3; B. Hrozny, Naram-sin et ses ennemis d'après un texte Hittite, „Archiv orientalni", 1929, vol. I, № 1, էջ 65—76; H. G. Guterbock, Die historische Tradition und ihre literarische Gestaltung bei Babyloniern und Hethitern bis 1200, „Zeitschrift fur Assyriologie und verwandte gebiete", Berlin, 1938, Bd. 44, Heft 1—2, էջ 68—71։ Լ. Ա. Բարսեղյան, նշվ. հոդ., էջ 88։

[3] B. Hrozny, Naram-sin et ses ennemis d'apres un texte Hittite, էջ 71—72։

[4] B. Hrozny, Histoire de l'Asie Antérieure, Paris, 1947, էջ 110։

[5] И. М. Дьяконов, Общественный и государственный строй Древнего Двуречья. Шумер, Москва, 1959, էջ 232։

[6] G. A. Barton, The royal inscriptions of Sumer and Akkad, London, 1929, vol. I, էջ 140—141։

[7] H. G. Guterbock, Die historische Tradition und ihre literarische Gestaltung bei Babyloniern und Hethitern bis, 1200, էջ 73—75։

[8] И. М. Дьяконов, История Мидии, Москва, 1956, էջ 126—129։

[9] A. Ungnad, Subartu, Berlin-Leipzig, 1936, էջ 51։

[10] I. Gelb, Hurrians and Subarians, Chicago, 1949, էջ 103։

իրավամբ, ինչպես նկատել են արևելագետներից շատերը, նույնացվում են վերոհիշյալ Արմանի երկրի հետ Ասորեստանյան թագավոր Շարրուկին II-ի (Սարգոն Ասսուրացի, 1980—1948 թթ. մ. թ. ա.) արձանագրություններից մեկում Արմանի երկիրը հիշատակում է կուտիների, լուլլուբիների ցեղերի և Արրապխա երկրի հետ միասին, որպես նրանց սահմանակից մի մարզ[11]։

Դեռևս 1929 թ. հայագետներից Գ. Դարանֆիլյանը, ծանոթանալով Բ. Հրոզնու աշխատությանը Նարամսինի արշավանքի մասին, գտավ, որ Արմանի երկիրը պարսկական արձանագրություններում հիշատակվող Արմինան (Armina) է[12]։ Արմանին Արմինայի հետ նույնացնելու փորձն առաջին անգամ կատարել է Հ. Տաշյանը, որը, սակայն, չկարողացավ զարգացնել իր տեսությունը։ Հ. Տաշյանը գտնում էր, որ Արմանին պետք է որոնել ոչ Թրակիայում, ոչ էլ Եվրոպայում, այլ Արևելքում[13]։ Սակայն այսպիսի նույնացման օգտին արտահայտած այդ տեսությունը պաշտպանություն չգտավ և արևմտաևրոպական ուսումնասիրողների զգալի մասը մերժեց այն։ Այդ ուսումնասիրողները հիմնականում ձգտում էին ապացուցել, որ Արմե>Արմինա>Արմեն ցեղանունը իր մեջ պահպանել է Հոմերոսի կողմից «Իլիականում» հիշատակվող արիմների (arim-oi) անունը և որ արիմները հանդիսանում են հայերի հնագույն նախահայրերը։

Ինչպես հայտնի է, առաջին անգամ Ս. Պարչը այդ արիմներին տեղադրեց Էրջիաս (Արդայոս) հրաբխի շրջանում, Կեսարիայի մոտ։ Հ. Մարկվարտը արիմ-արմեններին տեղադրում է նախ Փոյուդիայում՝ Անկարայի մոտ և Հալիսի միջին հոսանքում, ապա տրհեստականորեն գծում է նրանց գաղթի ճանապարհը դեպի Փոքր Հայք։ այն հարմարեցնելով իր տեսությանը։ Սաուդարանելով armin-armen ցեղանունը, Հ. Մարկվարտը, ինչպես և հետագայում Լանգլուան, գտավ, որ այս անվան արմատը arm-ն է, իսկ երկրորդ մասը՝ ուրարտական ini կամ ina վերջածանցն է։

Ուսումնասիրողներից Ռոշարը armen-ը ստուգաբանում էր որպես սեմական ծագում ունեցող ցեղանուն, որի հիմքը տեսնում էր երրայական մին (min) կամ միննի (minni) արմատի մեջ։ Ռոշարի տեսության ջերմ պաշտպաններից էր Կ. Ա. դե Կարան։ Վերջինս գտնում էր, որ արմենները նույն Սաննա երկրի բնակիչներն էին, որոնք սակայն սեմական ծագում չունեին[14]։ Պնդելով, որ Armina ցեղանունը կազմված է մինի (mini) կամ մանի (mani) արմատից, Կ. դե Կարան Armina-ն կարդում է Karmina (Կարմինա) ձևով, որի մեջ, ըստ նրա, kar-ը տեղ, բնակավայր ցույց տվող մասնիկ է և քանի որ կոկորդային k-ն ընկնում է, ապա հարկավոր է այն կարդալ որպես Արմինա (Armina) կամ Արմենիա (Armenia)[15]։

Լագարդի կարծիքով armen ցեղանունը արիական ծագում ունի, որի հիմքը Anramainy-ն է։ Ուսումնասիրողներից Ֆինցը, պաշտպանելով Լագարդի տեսությունը, դանում էր, որ armen ցեղանունը համապատասխանում է Եվսեբիոսի մոտ հիշատակվող Mivuas-ին (այսինքն ընդունում է min կամ main արմատի գոյությունը)[16]։

Հյուբշմանը, Կիպերտը, Լեման-Հաուպտը, Հ. Տաշյանը և Գ. Ղափանցյանը armen ցեղանունը համարում են տեղական ծագում ունեցող ցեղանուն, որը միդիացիների միջոցով է տարածում գտել ինչպես պարսիկների, այնպես էլ հույների մոտ[17]։

Ի. Մ. Պիոտրովսկու կարծիքով Arme ցեղանունը իրականում պետք է կարդալ տեղ ցույց տվող ni վերջածանցի հետ միասին, այսինքն Armeni կամ Armini ձևով (սեպագիր նշանը կարող է արտահայտել և՛ me-ն, և՛ mi-ն)[18]։

---

[11] Reallexikon der Assyriologie, Berlin, 1928, t. 1, էջ 241։

[12] Ռ. Դարանֆիլյան, Նարամ-սին և իր թշնամիներն ըստ հարյան բնագրի, «Հանդես ամսօրեայ», 1929, № 5, էջ 287—288։

[13] Հ. Տաշյան, Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920, էջ 133։

[14] Կ. Ա. դե Կարա, Արմենիա անվան ստուգաբանությունն և հայ ազգի ծագումն, «Բազմավեպ», 1899, № 12, էջ 576։

[15] Նույն տեղում, էջ 577։

[16] Նույն տեղում, էջ 576։

[17] Г. Капанцян, Историко-лингвистические роботы, Ереван, 1957, էջ 190—191։

[18] Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1945. էջ 10։

Հնդեվրոպական խեթերենում[19], լուվիերենում[20] և հիերոգլիֆ խեթերենում[21] հանդիպող arma բառը հանդես է գալիս լուսին իմաստով և իր հերթին արմատավորում է մի շարք հատուկ անուններ (Arma-ziti, Arma-piya, Arma-wiya, Arma-nani, Arma-datta, Arma-muwa)։

Հնդեվրոպալեզու միբենյան հույների գծային B գրությամբ արձանագրված մի բեկորի վրա նույնպես կարդացվում է Ἀρ(ε)μεντς (Areimenes) անունը[22]։

Խեթական թագավորներ Սուպպիլուլիումայի[23] և Մուրսիլ II-ի[24] դաշնագրերում ու տարեգրություններում հաճախակի հիշատակվում է Արմատանա (Armatana) երկիրը, որն իր հարձակումներով լրջորեն անհանգստացնում էր խեթերին։

Խայասա-Ազզիի ցեղային միության կազմի մեջ մտնող Արմատանա երկիրը տեղադրվում է Երզնկայից հարավ-արևմուտք, Մնձուրի լեռների ստորոտում (Մեծ և Փոքր Արմուտաններ գյուղերի շրջանում) և հյուսիսում սահմանակից էր կասկայական ցեղերին։

Վ. Բրնդցյանուն, ելնելով Ս. Տ. Երեմյանի կողմից հայտնված այն կարծիքից, որի համաձայն Արմատանան պետք է համարել Խայասա-Ազզիի մասը կազմող երկիր և Խայասայի սահմաններում էլ որոնել այն, մի քանի դիտողություններ է անում Արմատանա երկրի ժողովրդի ցեղային պատկանելիության մասին։ Արմատանա և Արմե ցեղանունները առաջացած համարելով միևնույն հնդեվրոպական արմատից (Arma = Arme), նա գտնում է, որ միայն ենթադրարար կարելի է ընդունել, թե Արմատանա երկիրը Խայասայի կենտրոնական մասում առաջացել է հնդեվրոպական արիմների գաղթի հետևանքով, երբ դեպի Տավրոսի լեռները շարժվող այդ ցեղերը մի որոշ ժամանակ մնացին ու հաստատվեցին Խայասայում։ Տեղաշարժ կատարող այդ ցեղերը հետագայում իջան Հայկական լեռնաշխարհի հարավային մասը, որտեղ և կազմեցին արմենների թագավորությունը Արմե երկրում[25]։ Սակայն դա սոսկ ենթադրություն է և այն էլ անհավանական։

Ասսուրական աղբյուրներում հաճախակի հիշատակվում է Ուրումե երկիրը, որը սովորաբար նույնացվում է Արմե երկրի հետ։ Ուրումեացիների մասին առաջին տեղեկությունները տալիս է Թիգլատպալասար I-ը (1115—1077), նա հայտնում է, որ իր գահակալությունից շուրջ կես դար առաջ «խաթթի երկրի անհնազանդ մարդիկ» կասկայիներն և ուրումեացիների ցեղերը, որոնք ներխուժել էին հյուսիսից, գրավեցին Ալզի և Պուրուլումզի երկրները[26]։ Մեկ այլ բնագրում կասկայիների փոխարեն ուրումեացիների հետ հանդես են գալիս արեշլացիների ցեղերը, որոնք նույնպես կասկայիներ էին[27]։ Ս. Տ. Երեմյանը այս ուրումեացիներին տեղադրում է Խայասայում, որտեղ, ըստ նրա, բնակվում էին հայերի հնդեվրոպական նախնիները՝ արիմները, resp ուրումեացիները, որոնք մուշկերի հետ միասին իջան մինչև Տիգրիսի հովիտը և իրենց ենթարկեցին Ասորեստանի տիրապետության տակ գտնվող Շուբարտու (Շուպրիա) երկիրը[28]։

Մեր կարծիքով այս ուրումեացիների ցեղերը բնակվում էին Արմատանա երկրում և կազմում էին նրա հիմնական բնակչությունը։ Սակայն մենք չենք կարող ընդունել այն տեսությունը, ըստ որի ուրումեացիները «Իլիականումը» հիշատակվող նույն արիմներն էին, որոնք փոյուգիա-

---

[19] E. Laroche, Recherches sur les noms des dieux Hittites, Paris, 1947, էջ 80։

[20] E. Laroche, Dictionnaire de la langue Louvite, Paris, 1959, էջ 30—31։

[21] E. Laroche, Les Hieroglyphes Hittites, Paris, 1960, vol. 1.

[22] M. Ventris and J. Chadwick, Documents in Mycenaean Greek, Cambridge, 1956, էջ 416։

[23] E. Weidner, Politische dokumente aus Kleinasien die Staatsvertrage in Akkadischer sprache aus dem archiv von Boghaz-Köi. Berlin, 1923, էջ 3—4։

[24] H. G. Güterbock, The Deeds of Suppiluliuma as told by his son Mursili II „Journal of Cuneiform Studies", 1956, vol. X, № № 2, 3, 4.

[25] В. Бэнэцяну, Некоторые вопросы этногенеза армян, „Историко-филологический журнал", 1961, № 2, էջ 114—115։

[26] И. М. Дьяконов, Ассиро-Вавилонские источники по истории Урарту (АВИИУ), № 10, I, 62 (ВДИ, 1951, № 2, էջ 270)։

[27] АВИИУ, № 11

[28] Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 61։

նան դեղերի հետ միասին ներգաղթ կատարեցին դեպի Հայկական լեռնաշխարհ, XIV—XIII դդ. մմ. թ. ա.), ժամանակավորապես հաստատվելով Խայասայի տերիտորիայում, XIII դ. վերջերին սահմանակից կասկայական ցեղերի հետ միասին ներխուժեցին հարավ, գրավելով Ալզի, Պուրուլումզի, Շուպրիա երկրները և վերջնականապես այստեղ կազմավորեցին Արմե-Շուպրիա պետությունը։

Ուրումնացիների տեղաշարժը Արմե-Շուպրիայում ակնհայտ է, քանի որ ինչպես ասսուրական, այնպես էլ ուրարտական աղբյուրները վկայում են այդ փաստը։ Ըստ ուրարտագետների մեծ մասի, սկզբնաղբյուրներում հիշատակվող Ուրմե, Ուրմեուխի և Արմե երկրները նույնացվում են։ Արմե երկրի մասին ուրարտական արձանագրություններում միակ տեղեկությունը տալիս է Սարդուրի II (764—735) թագավորը, որը արշավի ելնելով «... ...հաղթեց Արմե երկիրը, հաղթեց Նիխիրիանի քաղաքը, երկրի թագավորական քաղաքը.[29]

Ուսումնասիրողներից Գ. Ղափանցյանը, Ռ. Պիոտրովսկին, հետագայում Հ. Մանանդյանը և Ի. Դյակոնովը, ուշադրություն դարձնելով Արմե երկրի անվան և armen ցեղանվան միջև եղած կապի վրա, եկել են այն եզրակացության, որ armeni ցեղանունը հանդիսանում է երկրորդական գոյացում ուրարտական ni վերջածանցով, որը ծագել է խուրրի-ուրարտական լեզվահիմքի վրա, դեպի Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանը հայերի նախնիների գաղթելուց հետո։

Արմե երկրի տեղադրման հետ է կապվում նաև Նիխիրիանի քաղաքի տեղադրությունը։ Նիխիրիանի քաղաքի տեղադրման հարցում ներկայումս կան բազմաթիվ կարծիքներ, որոնց մեջ հավանական և համոզիչ դիտողությունները պատկանում են Հ. Մանանդյանին ու Ս. Երեմյանին։ Հ. Մանանդյանը Նիխիրիանի քաղաքը փնտրում է Արևմտյան Տիգրիսից հարավ, Քաշչիարի լեռներում[30]։ Այսպիսի տեղադրումը հաստատվում է Ասսուրում եղած ասսուրական փոխարքա-էպոնիմների՝ 66-րդ քարակոթողի արձանագրության վկայությամբ, ըստ որի Նիխրիան Նիխիրիանի շրջանը գտնվում է Նինվե և Կագմուխի երկրների միջև[31], այսինքն՝ ներկայիս Մոսուլի մոտ, նրանից արևելք, Տուր-Աբդին-Քաշչիարի լեռներում, Ջեզիրե և Միդիագ քաղաքների հարակից շրջաններում[32]։

Ս. Երեմյանը Նիխիրիանի քաղաքը վերջնականապես տեղադրում է Կագմուխի շրջանից արևելք, «Տիգրիսի գալարի մոտ, նրա ոսկի ափին, այնտեղ, ուր Կովկասյան ռազմական շտաբի տասը վերստանոց քարտեզի վրա նշանակված է Նիխան-դաղ լեռնագագաթը»[33]։ Նա միաժամանակ հանգում է այն եզրակացության, թե «Նիխիրիանի քաղաքի տեղադրումը Տիգրիսից հարավ ցույց է տալիս, որ ասորեստանյան և ուրարտական աղբյուրներում հիշատակվող Արմե||Ուրումե||Ուրմենիուխի երկիրը չի կարող կապ ունենալ այդ քաղաքի շրջանի հետ։ Դրանք միանգամայն տարբեր տերիտորիաներ են»[34]։

Ս. Ս. Երեմյանը հիմնականում զարգացնում է այն թեզը, որի համաձայն մուշկերի, նախախեթական արխազա-չերքեզական կասկայցիների կամ արեշլայցիների ցեղերի հետ միասին հայերի հնդեվրոպական նախնիները արիմներ-ուրումեացիները Խայասա երկրից գաղթեցին դեպի Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները, հաստատվելով Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում, աստիճանաբար նվաճելով խուրրիարնակ Շուպրիա երկիրը, որտեղ և հիմնադրեցին Ուրումու, Արիմե, Արմե թագավորությունը[35]։

Անհավանական է թվում ուրումեացիների և արմեենների (կամ արմեացիների), ինչպես և Ուրմե ու Արմե երկրների նույնացումը ուսումնասիրողների կողմից։ Ուրմե և Արմե անունների հնչունական անժխտելի նմանությունը իրավունք չի տալիս դրանք նույնացնելու։ Ինչպես ասսուրական, այնպես էլ ուրարտական աղբյուրներում մեզ չեն հանդիպում Ուրմե երկիրը Արմե երկրին տեղագրապես նույնացնելու վկայություններ։

---

[29] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960, № 156, DI+DII.

[30] Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Армении, Ереван, 1956, էջ 138—141։

[31] АВИИУ, № 40.

[32] Ս. Ս. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, էջ 66։

[33] Նույն տեղում։

[34] Նույն տեղում, էջ 67—68։

[35] Նույն տեղում, էջ 68—72։

Ուրմե երկիրը համարյա բոլոր ուրարտագետների կողմից իրավացիորեն տեղադրվում է Սասունի լեռների շրջանում, իսկ Արմե երկիրը, ինչպես վերևում տեսանք՝ Սասունից հարավ-արևելք Քաշշիարի լեռների շրջանում, Տիգրիսից հարավ, նրա գալարի մոտ։ Փաստորեն աղբյուրները մատնացույց են անում միանգամայն տարբեր երկու երկրների գոյության մասին։

Խուրրիական մյուս՝ Ուրմեից բոլորովին տարբերվող և հեռու գտնվող Արմե երկիրը միացվեց Ուրարտուի թագավորությանը և պատնեշի դեր էր կատարում ասորեստանցիների, ապա հետագայում պարսիկների դեմ։

Ս. Տ. Երեմյանի կողմից Նիխիրիանի քաղաքի տեղադրումը միանգամայն ճիշտ է և այն երբեք չպետք է անջատել Արմե երկրից, վախ զգալով այն բանի համար, որ Ուրմե երկիրը այլ վայրում է տեղադրվում, քանի որ հայագիտության մեջ ընդունված տեսությունը Ուրմե-Արմեի նույնացման մասին փաստորեն չի հաստատվում և ժխտվում է։

Մեր կարծիքով խուրրիարենակ Արմե երկրի մասին պահպանված հնագույն վկայությունները պետք է համարել հին. խեթական և հին ասորական բնագրերը, որտեղ Արմե ցեղանունը հանդես է գալիս Արմանի, Արմունա անուններով։

Ակկադի թագավոր Նարամսինի (XXIII դ. մ. թ. ա.) և Ասորեստանի թագավոր Սարգոն Ասսուրացու (XX դ. մ. թ. ա.) արշավանքները դեպի Արմանի երկիրը տեղի են ունեցել հետագայի Արմե երկրի տերիտորիայում, այսինքն Քաշշիարի լեռներից արևմուտք, Տիգրիսի հարավային շրջաններում։ VIII դ. (մ. թ. ա.) միացվելով Ուրարտուին, Արմանի-Արմե երկիրը երկար ժամանակ պահպանեց իր գոյությունը. VI դ. (մ. թ. ա.) անկախություն ձեռք բերեց և սկսեց իրեն ենթարկել դեպի հյուսիս-արևելք ընկած տերիտորիաները։

VI դ. (մ. թ. ա.) վերջերից Արմանի-Արմե երկիրը պարսկական արձանագրություններում հանդես է գալիս Արմինա ձևով։ Արմանի>Արմե>Արմինա երկիրը, ինչպես և նրան սահմանակից շրջանները զբաղեցնող ցեղերը սկսում են տեղաշարժ կատարել դեպի Վանա լճի ավազանը և հյուսիս-արևելք՝ Արարատյան դաշտավայրը։ Հարավից հյուսիս տեղաշարժ կատարող այս ցեղերի մասին, մեր կարծիքով, լավագույն տեղեկությունները հաղորդում է Մ. Խորենացին (Հայոց պատմություն, գիրք I, գլ. 10 և 12), երբ պատմում է այն մասին, թե ինչպես Բելին ենթարկվել չցանկացող Հայկը Բաբելոնում իր որդի Արմենակի ծնվելուց հետո գնաց հյուսիսում գտնվող Արարատյան երկիրը, ճանապարհին իրեն ենթարկելով տեղաբնիկ ցեղերին։

Այսպիսով, armen ցեղանունը ունի տեղական խուրրիական ծագում, որը երբեք չի առնչվում «Իլիականում» հիշատակվող արիմների ցեղանվան հետ. դրանց նույնացման փորձերը արհեստական են ու քիչ հավանական։

Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված Արմե ցեղային միությունը, ինչպես Խայասա-Ազզին հյուսիսում, ազգային դեր խաղաց տեղաբնիկների միավորման գործում։

Հնդեվրոպալեզու փռյուգիական մուշկերը և հնդեվրոպալեզու խայասական ցեղերը, հյուսիսից տեղաշարժ կատարելով դեպի Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավ-արևելյան շրջանները, իրենց են ենթարկում ուրարտալեզու և խուրրիալեզու ցեղերն ու երկրները։ Միջցեղային հաղորդակցման հիմնական միջոցն է դառնում հնդեվրոպական ընտանիքին պատկանող խայասերենը, որը միաժամանակ հարստանում է փռյուգերենի և միգիերենի տարրերով, զգալի ազդեցություն կրելով նրանցից։

Խուրրիական և ուրարտական ցեղերի լեզուները աստիճանաբար տեղի են տալիս, իսկ հայոց լեզուն հետզհետե տարածվում է Հայկական լեռնաշխարհի ներքին շրջաններում ապրող ցեղերի մեջ, դրանով իսկ նպաստելով հետագայում այդ ցեղային լեզուների ձուլմանը, որի կրողները II դ. (մ. թ. ա.) արդեն միալեզու էին և էթնիկական տեսակետից կազմում էին մի միասնություն։

Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ